ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9881/02/24 ք. Երևան
26 Նոյեմբերի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Վիոլա» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության, ՀՀ ԱՆ «Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Երրորդ անձինք)՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության՝ 3-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը, 5-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, 6-րդ կետով 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին 6, 7 և 27 չափաբաժիններով «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատել պարտավորեցնելու և «Վիոլա» ՍՊ ընկերությանը 6, 7 և 27 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու պահանջների վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

Հայցվորը 20.11.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության, ՀՀ ԱՆ «Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության՝ 3-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը, 5-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, 6-րդ կետով 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին 6, 7 և 27 չափաբաժիններով «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատել պարտավորեցնելու և «Վիոլա» ՍՊ ընկերությանը 6, 7 և 27 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու պահանջների վերաբերյալ, որը 21.11.2024 թվականին բաշխվել է դատավոր Ա. Սաֆարյանին:

Նշված քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 22.11.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ առողջապահության նախարարությունից պետք է պահանջել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

1. «Վիոլա» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության, ՀՀ ԱՆ «Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության՝ 3-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը, 5-րդ կետով ընթացակարգի 27-րդ չափաբաժնով «Մեդթրեյդ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, 6-րդ կետով 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին 6, 7 և 27 չափաբաժիններով «Վիոլա» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատել պարտավորեցնելու և «Վիոլա» ՍՊ ընկերությանը 6, 7 և 27 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու պահանջների վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:
2. ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել Դատարան ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/83» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Սաֆարյան

Digitally signed by SAFARYAN ARMINE
6107840465

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am